ՏԻՐԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(X—XI դդ.)

Կ. Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Տիրան մատենագրի մասին տեղեկություններ են հաղորդում պատմիչներ Արիստակես Լաստիվերցին և Մատթեոս Ուռհայեցին։ Արիստակես Լաստիվերցին Գագիկ I Բագրատունի արքայի (989—1020 թթ.) և Սարգիս Ա Սևանեցի կաթողիկոսի (992—1019 թթ.) գահակալության տարիներին հայ իրականության մեջ տեղի ունեցած քաղաքական և մշակութային իրողությունների մասին խոսելիս գրում է. «Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝ Սարգիս և Տիրան անուն և Յենովք, որ կաթողիկոսարանին էին վարդապետք, և... այլք բազումք, յորոց աւուրս բարձրանայր յոյժ եղջիւր եկեղեցւոյ ուղղափառ խոստովանութեամբ։ Իսկ որք խէթ աչօք հայէին ի մեզ, ի սոցա վարդապետական հանդիսիցն կորակնեալք իբրև զմկունս ի ծակս որմոց սողոսկեալ մտանէին»[1]։ Պատմիչի հաղորդած տեղեկությունից իմացվում է, որ Տիրանը, ի թիվս Սարգսի և Ենովքի, կաթողիկոսարանի վարդապետ էր։ Այդ ժամանակ կաթողիկոսարանը գտնվում էր Անի մայրաքաղաքում։ Այս մասին Մ. Օրմանյանը գրում է. «Սարգիս կրցած է ընտրութենե և օծումեն ետքը այլևս Արգինա չդառնալ, և մնալ Անի, Գագիկի մոտ»[2]։ Անիում Տիրանը հանդես է եկել դավանաբանական պայքարի ճակատում։ Մատթեոս Ուռհայեցին Գագիկ I Բագրատունու ժամանակի նշանավոր վարդապետներին հիշելիս նշում է նաև Տիրան Կապանեցի իմաստասերին. «Եւ փառաւորեցաւ անունն Գագկայ ընդ ամենայն վարդապետաց տանն հայոց, որք եղեւեցան յայնմ ժամանակին լուսաւորք, և այս են անուանք վարդապետացն՝ Տիրանն Կապանեցին, Անանէ և Գրիգոր Նարեկացիքն... և այլք այսպիսիք անյաղթք, որք կային լցեալք աստուածային շնորհօքն, որք երևեցան յաշխարհս Հայոց յայսմ ժամանակիս»[3]։ Ինչպես տեսնում ենք, Մատթեոս Ուռհայեցին ևս X դարի երկրորդ կեսի և XI դարի առաջին կեսի հայ մատենագրության ու մշակույթի ակնառու դեմքերի թվում հիշում է Տիրանին իբրև «աստուածային շնորհօք լցեալ, անյաղթ իմաստասէր»։

Բանասիրական գրականության մեջ կարծիք կա այն մասին, թե Տիրան մատենագիր և Տիրան Կապանեցին միևնույն անձն են[4]։ Տիրան մատենագրին հայագիտության մեջ անդրադարձել են Ա. Մխիթարյանցը[5], Գ. Տեր-Մկրտչյանը[6], Գ. Զարբհանալյանը[7], Մ. Օրմանյանը[8], Ֆ. Մակլերը[9], Հ. Աճառյանը[10], Ա. Մնացականյանը[11]։

---

1 «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի. Երևան. 1963, էջ 26։

2 Մ ա ղ ա ք ի ա Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում. Բեյրութ, 1959, § 802։

3 Մ ա տ թ է ո ս Ու ռ հ ա յ ե ց ի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 179։

4 Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, § 875։ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. Ե, Երևան, 1962, էջ 157—158։

5 «Արարատ». 1876, Գ, էջ 93—96։

6 Գ. Տ ե ր-Մ կ ր տ չ յ ա ն. Հայկականք (Ա—ԺԲ). Վաղարշապատ, 1894, էջ 21—26։

7 Գ. Զ ա ր բ հ ա ն ա լ յ ա ն. Հայկական հին դպրութիւն. Վենետիկ, 1897, էջ 793—794։

8 Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում. § 816, 850, 875։

9 „Revue des études Arméniennes". T. 2, Paris, 1922, p. 248.

10 Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. Ե, էջ 157—158։

11 Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ. Երևան, 1966, էջ 204—210։

Ձեռագրերում Տիրանի անվամբ առկա են հետևյալ խորագրերով գրվածքները՝ «Ի հաւատոյ թղթէն Տիրանայ Հայոց վարդապետի, զոր գրեաց առ Սենեքերիմ արքայ» և «Տիրանայ Հայոց վարդապետի պատասխանիք հարցմանց թագաւորացն Աղուանից Ատրներսեհի և Փիլիպէի»։ Նրա երկերի վերնագրերից իմացվում է, որ «Թուղթը» ուղղված է Սենեքերիմ արքային, իսկ «Պատասխանիքը»՝ Աղվանից թագավորներ Ատրներսեհին և Փիլիպեին։ Արդեն որոշ է, որ Տիրանն ապրել և ստեղծագործել է X դարի վերջերին և XI դարի սկզբներին, ուրեմն և նրա հետ մատենագրական խնդիրներով առնչված պատմական անձանց՝ հիշյալ երեք թագավորներին էլ պետք է որոնենք նշված ժամանակահատվածը ներկայացնող աղբյուրներում և համապատասխան հետազոտությունների մեջ։ Հ. Աճառյանը Սենեքերիմի մասին, որ ապրել է X—XI դդ., գրում է. «Սենեքերիմ, որ և Հովհաննես, որդի Իշխան-Սևադայի, թագավոր Փառիսոսի (1003 թ.)»[12]։

Հ. Աճառյանը հիմք է ընդունել պատմիչներ Մովսես Կաղանկատվացու և Ստեփանոս Տարոնեցու հաղորդած տվյալները։ Մովսես Կաղանկատվացին, որի երկասիրությունն ավարտվում է X դարի վերջի անցուդարձերի նկարագրությամբ, «Տոհմերի ժառանգական հաջորդականության համառոտ թվարկումը» վերնագրի տակ Աղվանից վերջին թագավորի մասին գրում է. «Գրիգորը սերում է Սևադային որը Իշխան անունով էր կոչվում, և Ատրներսեհին։ Իշխան անունովը սերում է չորս զավակ՝ Հովհաննես, Գրիգոր, Ատրներսեհ և Փիլիպե։ Բարձրյալի աջը Հովհաննեսին ընտրեց, որը և Սենեքերիմ կոչվեց, բարձրացնելով թագավորական գահ»[13]։ Ստեփանոս Տարոնեցին «Յաղագս վճարելոյ մահուամբ իշխանացն Փառիսոսոյ» խորագրի տակ, երկասիրության ավարտին գրում է. «Յայսմ ժամանակի, ի ՆԾԲ (1003) թուականին իշխանքն Փառիսոսոյ, որ ի Հայկազեան ազանց. բաւեալ մինչև զՍենեքերիմ և զԳրիգոր՝ սպառեցան մահուամբ»[14]։ Որ Աղվանից Սենեքերիմ և Գրիգոր իշխանավորները եղբայրներ են այդ մասին վկայված է ինչպես «Աղվանից աշխարհի պատմության» մեջ, այնպես էլ Ասողիկի կողմից. «Իսկ մայր թագաւորին Աբասայ, բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց, որ էր քոյր թագաւորացն Փառիսոսոյ՝ Սենեքերիմայ և Գրիգորի»[15]։

Ինչպես տեսնում ենք, Տիրան մատենագրի «Թուղթը» ուղղված է Աղվանից թագավոր, հայազն Սենեքերիմին, որը գործել է X դարի վերջին և XI դարի սկզբին։ Նա որդին է Իշխան-Սևադայի, իսկ եղբայրներն են Գրիգորը, Ատրներսեհն ու Փիլիպեն։ Վերջին երկուսին էլ ուղղված է Տիրանի «Պատասխանիքը»։ Հ. Աճառյանը, հիմք ընդունելով «Աղվանից աշխարհի պատմությունը», Ատրներսեհ անվան դիմաց գրում է. «Որդի Իշխան-Սևադայի, Թոռնորդի Սահակ-Սևադայի, որ Աշոտ Երկաթի աներն էր»[16]։ Փիլիպե անվան դիմաց կարդում ենք. «Որդի Իշխան-Սևադայի և Թոռնորդի Սահակ-Սևադայի՝ աներոյն Աշոտ Երկաթի։ Թագավորում է Աղվանից դահին. սա և Ատրներսեհ Երկրորդը դիմել են Տիրան վարդապետին և ստացել գրավոր պատասխան»[17]։ Այդպես, Տիրան մատենագիրը X դարի վերջին և XI դարի սկզբին եղել է Անիում կաթողիկոսարանի վարդապետ, որի համար և հորջորջվել է «Հայոց վարդապետ աստուածային շնորհօք լցեալ, անլաղթ իմաստասէր»։ Իր գիտական-աստվածաբանական պատրաստվածության շնորհիվ հեղինակություն է ձեռք բերել և ծնունդով Կապանից է։ Աղվանից հայազն իշխանավոր եղբայրներ Սենեքերի-

---

12 Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. Դ, Երևան, 1943, էջ 478, § 5։

13 Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանություն, առաջաբան և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի. Երևան, 1969, էջ 267։

14 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական». Ս. Պետերբուրգ, 1885, էջ 283։

15 Նույն տեղում, էջ 198։

16 Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. Ա, Երևան, 1942, էջ 263, § 16։

17 Նույն տեղում, հ. Ե, էջ 202, § 5։

մը, իսկ այնուհետև Ատրներսեհն ու Փիլիպեն դիմել են Տիրանին և ստացել նրանից «Թուղթն» ու «Պատասխանիքը»։

Իսկ որո՞նք են Տիրանի այս երկերի ստեղծման պատմական պատճառները։ Մ. Աբեղյանը, խոսելով դավանաբանական պայքարի գրականության մասին, հայտնում է, որ տակավին V դարից սկսած «հայերի համար դավանության խնդիրն ստանում է ազգային քաղաքական նշանակություն։ Հոռոմների ազդեցությունից զերծ մնալու և ազգային միությունը պահպանելու համար՝ պետք էր դավանապես զատվել նրանցից»[18]։ Քաղկեդոնականության վերաբերյալ վեճերը և նույնիսկ հալածանքները քաղկեդոնականների կողմից, անհատնում շարքով իրար են հաջորդել Բյուզանդական կայսրության գոյության ընթացքում։ Դա առաջ է բերել ընդարձակ դավանաբանական գրականություն հայ մատենագրության մեջ, որի նմուշներից է Տիրանի «Հաւատոյ թուղթը»՝ առաքված Սենեքերիմ Աղվանից արքային։ Այս Թղթի հատվածները հետագայում մտել են մի ժողովածուի մեջ, որի ընդօրինակությունները մեզ են հասել «Արմատ հաւատոյ» խորագրով։ Հայագիտությանն արդեն իսկ հայտնի է, որ Վարգան Այգեկցին 1205 թ. Հռոմկլայում կազմել է հիշյալ «Արմատ հաւատոյ» ժողովածուն, որի օրինակներից ամենալրիվը Մաշտոցի անվան Մատենադարանի № 3295 ձեռագիրն է[19]։ Վայդան Այգեկցու այդ երկը հիմնականում օտար և հայ հեղինակներից բերված վկայությունների ժողովածու է, որի նպատակն է պաշտպանել հայոց ավանդական դավանանքը հակաքաղկեդոնական ուղղությամբ։ «Արմատ հաւատոյ» երկում ընդգրկված է հսկայական քանակությամբ նյութ՝ առաջադրված խնդիրների պաշտպանության համար դիպուկ վկայություններ, հատվածներ հունական, ասորական, լատինական և հայկական մատենագրության հեղինակավոր դեմքերի գործերից։ Այս երկը հատվածներ է պարունակում նաև Տիրան մատենագրի «Հաւատոյ թուղթ առ Սենեքերիմ թագաւորն» գրվածքից։ Տիրանի «Հաւատոյ թղթի» հատվածների առկայությունը «Արմատ հաւատոյ» ժողովածուի մեջ ենթադրել է տալիս, որ նա գործուն մասնակցություն է ունեցել դավանաբանական պայքարին։ Տիրանը եղել է ճանաչված հեղինակություն, որին դիմել են մի դեպքում Աղվանից արքա Սենեքերիմը, իսկ մյուս դեպքում՝ Աղվանից թագավորներ Ատրներսեհը և Փիլիպեն։ Վերջիններս երկու հարցուր հարց են ուղղել գիտնական վարդապետ Տիրանին, իսկ նա պատասխանել է։ «Հարցմունք և պատասխանիքի» գրական տեսակից հայ մատենագրության մեջ ինքնուրույն և թարգմանական հարցուրավոր նմուշներ կան, որոնց սկզբնավորությունը V—VI դդ. է։ Դրանցով հետապնդվել է ուսուցողական նպատակ։ Այդ տեսակին է պատկանում նաև Տիրանի «Պատասխանիքը», որի բնագիրը առկա է Մաշտոցի անվան Մատենադարանի վեց ձեռագրերում։ Դրանցից հնագույնը XIII դարից է, Կիլիկիայում Հովհաննես արքաեղբոր պատվերով ընդօրինակված և կրում է 3710 համարը։ Տիրանի «Պատասխանիքում» առաջին հերթին նկատելի են X—XI դդ. հայոց մտածողության և աշխարհայացքի մեջ տեղի ունեցած խմորումները, առաջացած փոփոխությունները։ Դրա անառարկելի ապացույցներից է 37-րդ (Լէ) հարցի նյութ հետևյալ պատասխանը. «Ոչ երբէք ասացեալ և սահմանեալ աւրէնսդրութիւն Աստուծոյ ասելով, թէ այսոքիկ քեզ պիղծ են և սուրբ, այլ իբրև ետես ինքն մարդն ի գազանս և յանասունս զրկիչս և պատառողս ընկերաց իւրեանց, կարդաց ապա ինքնին մարդն զոմն սուրբ և զոմն պիղծ, և արդ զորս ընտրեաց մարդն ի միտս իւր, զայսոսիկ ի ձեռն Մովսէսի հրամայեաց. այս ինչ քեզ սուրբ եղիցի և այս՝ պիղծ» (հմմտ. Ղևտ., ԺԱ)։

«Պատասխանիքում» արծարծված են զանազան բնույթի խնդիրներ. այդ թվում տոմարական, տիեզերագիտական, ավանդապատում, տեղագրական, դիցաբանական, բժշկագիտական (ցուրտ ցավի մասին է), փիլիսոփայական, վերծանության և մեկնաբանական։ Տոմարագիտական խնդիրներին են վերաբե-

---

18 Մ. Աբեղյան. Երկեր. հ. Դ, Երևան, 1968, էջ 397։

19 «Բազմավեպ». 1968, № 7—12, էջ 233—271։

ում առաջին և վեցից ութերորդ պատասխանները, ըստ որոնց բացատրվում է, որ օրվա սկիզբն առավոտն է։ Եվ պատճառաբանում է մատենագիրը, թե օրվա սկիզբը ոչ թե խավարով պետք է սկսվի, այլ՝ լույսով, այդպիսով։ Իրոք, այդպես է ընդունված եղել հայկական հին տոմարում[20]*։ Ըստ էության սա միտում էր անդրադառնալու տոմարական ազգային ավանդներին։ Հետաքրքրական է իմանալ, որ հայկական հեթանոսական տոմարում օրը հաշվել են այդպիսի՝ լույսի պաշտամունքով պայմանավորված, իսկ քրիստոնեական շրջանում, հրեական և ասորական ազդեցությամբ, արևի մայր մտնելուց սկսած՝ երեկոյից*[21]*։ Տոմարագիտական մյուս պատասխաններում պարզաբանվում են տարվա վերադրի, լուսնի լրման և հարակից այլ հարցեր, որոնց կապակցությամբ շեշտվում է հետևյալ ուշագրավ միտքը. «Ամենայն սրաբածք ստեղծան վասն մարդոյն տեսլեան և հաճոյից յաչս նորա»։ Տիեզերագիտական բնույթի են 121, 150 և 151-րդ պատասխանները, ուր բացատրված են իր ժամանակի արևելյան ժողովուրդների՝ հայերի, արաբների, պարսիկների, տիեզերագիտական ըմբռնումների հետ առնչվող զանազան հարցեր։ Դրանցում ընդգծելի է հետևյալ միտքը. «Եւ զի դարձաւ արեգակն շրջակայի կամարաւքն, զոր պարսիկքն փիլաքս ասեն, յորում կան ամենայն լուսաւորքս հաստատեալ և բևեռեալ յաւդս, ի հրամանս Աստուծոյ ամենայնիւ շրջեցաւ և ո՛չ արեգակն միայն» (հմմտ. Յեսու Նավեա, ժ, 12—14)։ Այն դեպքում, երբ հարցը վերաբերում է խղճի դրսևորմանը, Տիրանը պաշտպանում է խղճի ազատությունը, բանաձևելով՝ «Հաւատալ և պաշտել զԱստուած իւրաքանչիւր կամք ի և ոչ՝ հարկ» (ՃԸ)։ Ազատակամության տեսությունը մեզանում տեղ է գտել դեռևս «Յաճախապատում ճառքում»*[22]*։ Ըստ այս տեսության՝ մարդն ի ծնե կամքի, ուրեմն և խղճի, ազատություն ունի և իր գործունեության մեջ կամքով է վարվում*[23]*։ Տիրանը ևս հետևողական կողմնակիցն է խղճի ազատության։ Տիրանի «Թուղթը» և «Պատասխանիքը» հետաքրքրական ու օգտակար են հայ միջնադարյան մշակույթի զանազան խնդիրների լուսաբանման համար։*

ЖИЗНЬ И ЛИТЕРАТУРНОЕ НАСЛЕДИЕ ТИРАНА
(X—XI вв.)

К. О. СУКИАСЯН

(Резюме)

В древнеармянских рукописях сохранились принадлежащие Тирану трактаты—«Послание о вере» (лучший список—рукопись Матенадарана № 3295) и «Ответы» (лучший список—рукопись Матенадарана № 3710), которые адресованы армянским властителям Алуанка братьям Сенекериму, Атрнерсеху и Филиппу. Тиран родился в Капане, жил и творил в столице Армении Ани. В своих произведениях он откликался на животрепещущие вопросы того времени, участвовал в догматической борьбе на поприще литературы, однако его устремления к новому отразились в его прогрессивных идеях. Тиран был признан современниками в качестве «наставника армян, преисполненного божественной благодати, непобедимого философа». Исследование литературного наследия Тирана способствует освещению различных вопросов, связанных с календароведением, космографией, мифологией, медициной, философией.

---

20 *Հմմտ. Ա. Գ. Աբրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը. Երևան, 1944, էջ 113։ Նաև՝ «Տօմար և տօնացոյց, աշխատասիրեց Գրիգոր քահանայ Աղանեանց». Հաղարշապատ, 1890, էջ 19—22։*

21 *Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1324, էջ 251ա. «Եբրայեցիք և ասորիք զերեկոյն դնեն սկիզբն աւուր...»։*

22 *Գրիգոր Լուսավորիչ. Յաճախապատում ճառք. Վենետիկ, 1954, էջ 106։*

23 *Եղնիկ Կողբացի. Եղծ Աղանդոց. դիրք առաջին, ԺԱ, Պուէնոս Այրես, 1951։*